ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1 (40)

2020 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նիստ՝ հարցման ընթացակարգով, որը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետությունում հաստատված արտակարգ իրավիճակով:

Խմբագրական խորհրդի բոլոր անդամներին ուղարկվեցին հետևյալ բովանդակությամբ գրություններ.

«Հարգելի պարոն/տիկին…

Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ «Պատմաբանասիրական հանդես»-ի 2020 թ. № 1-ի բովանդակության հաստատմանը նվիրված խմբագրական խորհրդի նիստն անցկացնում ենք հարցման ընթացակարգով:

Խնդրում ենք գրավոր կամ բանավոր հայտնել Ձեր կարծիքը:

Կից՝ 2 թերթ»:

Հարցմանը գրավոր արձագանքեցին՝ Պ. Ավետիսյանը, Լ. Զեքիյանը, Վ. Ղևոնդյանը, Ա. Դոլուխանյանը, Լ. Աբրահամյանը, Ս. Մուրադյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Կատվալյանը, Վ. Դևրիկյանը, Ա. Մովսիսյանը:

Հարցմանը բանավոր արձագանքեցին՝ Ա. Մելքոնյանը, Ն. Հովհաննիսյանը:

Խմբագրական խորհրդի անդամները կատարեցին որոշ դիտարկումներ՝ տպագրվելիք հոդվածների վերնագրերի հետ կապված:

Որոշվեց հաստատել հանդեսի 2020 թ. № 1-ի բովանդակությունը:

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր Ա. Զաքարյան